հայանելու մեր արտադին շնորհակալությունները Սովետական իշխանությանց, Հայաստանի կառավարության, Ամենայն Հայոց կաթողիկոսին և Հայաստանի ժողովուրդին, որոնք սիրալիր գուրգուրանքով շրջապատեցին արտասահմանի պատգամավորները, հայկական հյուրասիրությամբ պատվելով մեզ։ Մասնավոր հաճույքով պետք է հիշեմ Արտասահմանի հետ կուլտուրական կապի ընկերությունը, որուն արժանավոր նախագահ ընկ. Մարիա Պետրոսյան աղնիվ գտնվեցավ գոհացնելու մեր բոլոր խնդրանքները։ Ճամբորդությունը անջնջելի պիտի մնա իմ հիշողության մեջ»։

(«Երևան» հուլիս 14, 64, 1945 թ.)

ԸՆԿ. ԳԵՎՈՐԳ ՄԵՔԹՈՒՊՃՅԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Էջմիածնի եկեղեցական ժողովին մեջ պուլկարահայության աշխարհական պատգամավոր ընկ. Գ. Մեքթուպճյան անցյալ երկու շաբաթի երեկոյան ժամը 7—30-ին զեկույց մը ըրավ Սոֆիայի հայ հասարակության առջև «Երևան» հառաջ. միության ակումբին մեջ։ Հայրենաբաղձ բազմություն մը փութացած էր լսելու ծաղկող հայրենիքի մասին ընկերոջ կրած տպավորությունները։ Ընկ. Մեքթուպճյան իր զեկույցը սկսավ հետևյալ պարզ, բայց հստակ հայտարարությամբ.

— «Ես ոչ հռետոր եմ, ոչ ալ ակիտատոր։ Արդեն Սովետ. Հայաստանի վերելքը ինքնին այնքան պերճախոս է, որ քարոզության պետք չունի»։ Ընկ. բանախոսը պարզ բառերով և իրապաշտ ոճով մը պատմեց ներկաներուն Հայաստանի ծաղկող մայրաքաղաքին՝ Երևանի կյանքը։ Ներկաները երևակայությամբ փոխադրվեցան Երևանի գեղեցիկ փողոցները, հսկա արդիական շենքերը, գիտական վերջին խոսքով գործող ֆապրիքաները, մշակութային հաստատությունները՝ համալսարան, դպրոց, թատրոն օփերա, սինէմա, թանգարան և մատենադարան։ Բանախոսը չէր մոռացած այցելել Հայաստանի շեն և բարեզարդ գյուղերը, ուր հայ գյուղացին իր նախահայրերեն ժառանգած շինարար ոգիով կկերտե երջանիկ կյանք։ Ոչ միայն քաղաքներու, այլև գյուղերու մեջ հաստատված են և մասնագետներու հսկողության ներքև կգործեն մանկամսուրներ, մանկապարտեզներ, դպրոցներ և ընթերցարաններ։ Հայաստանի էլեկտրոկայանները կշարունակեն ույժ և լույս հայթայթել երկրին արդյունաբերական հաստատություններուն գոհացնելու համար ժողովուրդին օրե օր աճող պահանջները։ Ընկերը շոշափեց նաև ներգաղթի և արտասահմանեն հայ ուսանողություն ղրկելու մասին Հայաստանի վարիչներուն ունեցած տեսակետները։ Իբրև վերջաբան ընկեր Մեքթուպճյան հայտարարեց հետևյալ առողջ մտքերը. «Հայ ժողովուրդը իր ազատությունը կորսնցնելե ի վեր միշտ խաբվեցավ օտարներեն։ Ունեցավ անկեղծ բարեկամ մը, որ օգնության ձեռք երկնցներ իրեն։ Միայն Ռուս մեծ ժողովուրդը ազատեց զայն կորուստե և պատեհություն տվավ անոր, որ մարդավայել կյանքի տիրանա։ Կեցցե Սովետ. մեծ Միությունը, կեցցե Սովետ Հայաստանը, կեցցե փոքր ազգերու ազատարար և պաշտպան Մեծ ՍՏԱԼԻՆԸ»։ Բուռն ծափահարություններով ընդմիջող և վերջացող ճառեն հետո ներկաներու կողմե հարցումներ արվեցան, որոնց գոհացուցի, պատասխաններ տվավ։ Նախագահ ընկ. Գ. Դարբինյան գեղեցիկ խոսքերով փակեց ժողովը։

(«Երևան» հուլիս 28, թիվ 68)

ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ

Վերադարձան Փարիզի պատգամավորները։ Անոնք թռիչքով անցան քանդված Եվրոպայի վրայեն, հասան հայրենի նավահանգիստը, հավիտենական Արարատի հանդիման մնացած անխոցելի ու անաղարտ։

Մեծ փոթորիկը չէր հասած մինչև հոն, բայց անոր զավակներ գացած էին փոթորիկը դիմավորելու, կասեցնելու։

Անոնք ջերմեռանդ ուխտավորներու պես գացին ծնրադրել հայկական վերածնունդի մեծ տաճարին առջև, որ մեր ծաղկած մայրաքաղաք «գաղցրիկ Երևան»-ն է։

Տեսան քառորդ դարե ի վեր հոն թափ-